ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

теории рационального и рыночных установках относительно публичных дел, подчеркивающих конкурентность и возможность выбора, обмен ресурсами и оптимальность.

BELA KHALAPYAN

PECULIARITIES OF PRACTICAL APPLICATION OF NEW PUBLIC MANAGEMENT IN THE CONTEXT OF INTRODUCTION OF THE GREAT BRITAIN AND NEW ZEALAND ATTEMPTS

Key words: *new public administration, managerializm, administrative reforms, public servise, decentralizacion, financial crisis, fundamental principles*

New Public Management (NPM)*, or new managerialism, as a concept and model of public administration, was created in the 1980s. The market type of public administration was quite evident in the administrative reforms of the 1980s and 1990s in a number of countries around the world. There is a well-known book on this problem, published 1992 by David Osborne and Ted Gaebler, "Reinventing Government," showing how the spirit of entrepreneurship transforms to the public sector. The most active market concept of public administration is developed in the United Kingdom, the United States, New Zealand, Canada and has its supporters in France, Germany, in the Nordic countries, and Japan. This is a modern model of reforming public administration. Peculiarities of transition to public management are expressed in the adherence to the action and change, and not stability in a certain norm. The key issue of these trends in the theory and practice of the government is to find a model of effective state and government. New Public Management is based on the assumptions of the theory of rational and market units regarding public affairs, emphasizing competition and choice, the exchange of the new criteria for the effectiveness of the public administration system, based on quality of service and profitability of resources and optimality.*

ՎՌԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Հայցորդ, ՀՊՏՀ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Հիմնաբառեր. *աշխատանքի միջազգային բաժանում, տարածաշրջան, առանձնահատկություններ, մասնագիտացում, Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, Եվրամիություն*

Արտադրական համակարգերի փոփոխությունները, որոնք տեղ են գտնում առանձին ճյուղերի շրջանակներում, հիմքեր են ստեղծում տարածաշրջանային մակարդակներում փոխհարաբերությունների հիմնարար վերանայման համար: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջանում բացահայտելու տարբեր տարածաշրջանային ինտեգրա-

ցիոն խմբավորումների շրջանակներում աշխատանքի տարածաշրջանային բաժանման առանձնահատկությունները:

Վերջին երկու տասնամյակի ընթացքում Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանը բնութագրվում է զգալի փոփոխություններով: 1997–1998 թթ. ասիական տնտեսական ճգնաժամը էական ազդեցություն թողեց տարածաշրջանի երկրների տնտեսական զարգացման վրա՝ բացահայտելով դրանց արժույթների փոխանակային փոխարժեքի խոցելիությունը և կարճաժամկետ կապիտալ հոսքերի լայնածավալ տատանումների հնարավոր հետևանքները: Երկարաժամկետում տարածաշրջանի զարգացման վրա առանցքային ազդեցություն է թողնում երկու միտում. նախ՝ շարունակվում է Չինաստանի տնտեսության դինամիկ զարգացումը, որը սկիզբ առավ 1979 թ. տնտեսական բարեփոխումներով և հասավ իր գագաթնակետին Առևտրի համաշխարհային կազմակերպությանը երկրի անդամակցության արդյունքում: Մասնագետները կանխատեսում են, որ ներքին խնայողությունների բարձր մակարդակը, տարողունակ ներքին շուկան և աշխատուժի անսահմանափակ քանակությունը թույլ կտան Չինաստանի տնտեսությանը հաջորդ տասը տարիներին ևս տնտեսական աճի տեմպերը պահպանել տարեկան 6-8% մակարդակում[1]: Եվ երկրորդ՝ Հարավարևելյան Ասիայի երկրների զարգացման վրա զգալի ազդեցություն է թողնում Ճապոնիայի տնտեսության համեմատական լճացումը: Ճապոնիայի տնտեսական աճի ցածր տեմպերը բնութագրվում են երկակի ազդեցությամբ.

1. 1980-ական թթ. ընթացքում Ճապոնիան տարածաշրջանի երկրների համար արտահանման հիմնական շուկա է, սակայն 1990-ական թթ. երկրի անկարողությունը՝ ամբողջությամբ սպառելու օրեցօր ավելացող ներմուծված ապրանքները, ստիպեց Հարավարևելյան Ասիայի երկրներին փնտրելու իրացման նոր շուկաներ և ներդրումների նոր աղբյուրներ:
2. Ճապոնիայի տնտեսության լճացումը կանխորոշում է Հարավարևելյան Ասիայի այլ երկրների բաժնի մեծացումը տարածաշրջանի ընդհանուր ՀՆԱ-ում: Այսպես՝ եթե 1960-ական թթ. Ճապոնիայի բաժինը տարածաշրջանի համախառն ՀՆԱ-ում 80% է, ապա այժմ՝ միայն 29.5%[2]:

Պատմականորեն այս տարածաշրջանը բնութագրվում է աստիճանակարգային կառուցվածքի առկայությամբ, որտեղ Ճապոնիան հանդես է գալիս որպես նորարարական գործընթացների առաջատար և անընդհատ տեղափոխում է արտադրական առանձին գործընթացները դեպի տարածաշրջանի ավելի պակաս զարգացած երկրներ: 21-րդ դարի սկզբին Հարավարևելյան Ասիայի երկրները կարելի է բաժանել 3 խմբի.

1. Ճապոնիա. ունի մասնագիտացման բարձր մակարդակ տեխնոլոգիական ճյուղերում, որոնք պահանջում են բարձր որակավորում ունեցող աշխատուժ:
2. Հոնկոնգ, Հարավային Կորեա, Թայվան և Սինգապուր. ունեն մասնագիտացման բարձր մակարդակ աշխատատար տեխնոլոգիական ոլորտներում:

---

[1] Report, APEC#2017-EC-01.1, Structural Reform and Innovation, APEC Economic Committee (EC), p. 59.

[2] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ ըստ http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx?ReportId=96 տվյալների:

3. Ինդոնեզիա, Մալայզիա, Թաիլանդ և Ֆիլիպիններ. մասնագիտացած են արդյունահանող արդյունաբերության և աշխատատար ապրանքների արտադրության մեջ: Մալայզիան զարգացնում է բարձրտեխնոլոգիական արտադրություններն, այն դեպքում, երբ Ինդոնեզիան պահպանում է խոր մասնագիտացումը օգտակար հանածոների արդյունահանման ոլորտում:

Հարավարևելյան Ասիայի երկրների մասնագիտացման գործընթացների էվոլյուցիան 1970 թվականից մինչ այժմ ընկած ժամանակահատվածում արտացոլում է տարածաշրջանի երկրների օրեցօր մեծացող տարբերությունները: Բոլոր տասը երկրները հետևում են ճապոնացի տնտեսագետների առաջ քաշած՝ «թռչող սագի» մոդելին՝[1] ըստ որի այս տարածաշրջանում տեղի է ունենում արտադրական կարողությունների անընդհատ տեղաշարժ մի երկրից մյուսը՝ կախված յուրաքանչյուրի համեմատական առավելություններից: Նորագույն տեխնոլոգիաների զարգացման էական առաջընթացը Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանի երկրներում պայմանավորում է այս տարածաշրջանի՝ որպես աշխատանքի միջազգային բաժանման նոր բևեռի զարգացման հնարավորությունները: Տարածաշրջանի դիրքերի ամրապնդման լրացուցիչ խթան են արժույթների փոխարժեքների կոորդինացման և կայունացման ջանքերը, չափորոշիչների միասնականացման, օտարերկրյա ներդրումների ներգրավման և կապիտալի շուկայի կարգավորման քաղաքականությունները:

Աղյուսակ 1

ԵՄ երկրների մասնագիտացման հիմնական բնութագրիչները[2]

	1980-1983 թթ.	*1996-2000 թթ.*	*2014-2017 թթ.*	*Շուկայական մասնաբաժինը 2017 թ.՝ 1970 թ. համեմատ*
Գյուղմթերքի արտադրություն	-6.0	-3.4	-1.9	4.1
Վառելիքաէներգետիկ համակարգ	-8.1	-14.3	-4.2	3.9
Այլ արդյունահանող արդյունաբերություն	-1.7	-1.2	-0.6	1.1
Բնական ռեսուրսների սպառում	-1.8	-0.8	-0.5	1.3
Սննդարդյունաբերություն	-1.0	1.1	0.8	1.8
Ավանդական ճյուղեր	3.1	2.3	-0.4	-3.5
Լայն սպառման առարկաներ	9.5	8.7	3.3	-6.2
Մասնագիտացված մատակարարներ	4.9	5.1	3.6	-1.3
Գիտատար ճյուղեր	1.4	1.8	-0.3	-1.7
Այլ ճյուղեր	-0.3	0.7	0.2	0.5

[1] Kojima K. The "flying geese" model of Asian economic development: origin, theoretical extensions, and regional policy implications // Journal of Asian Economics 11 (2000) p. 375–401.

[2] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ UN World Trade Database տվյալների հիման վրա: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար վերցվել է միջինացված ցուցանիշը: Հաշվարկները կատարվել են $RCA_{ij} = \frac{x_{ij}/\Sigma_j x_{ij}}{\Sigma_i x_{ij}/\Sigma_i \Sigma_j x_{ij}}$ բանաձևով: Եթե ցուցանիշը (≥0), ապա ոլորտում առկա են համեմատական առավելություններ, իսկ եթե (≤0), ապա դրանք բացակայում են:

Աղյուսակ 1-ի տվյալներից կարելի է ենթադրել, որ, ի տարբերություն Ասիա-Խաղաղ-օվկիանոսյան տարածաշրջանի երկրների, ԵՄ երկրների մասնագիտացման ցուցանիշները ժամանակի ընթացքում էական փոփոխությունների չեն ենթարկվել: Եվրոպական արդյունաբերությունը պահպանում է իր համեմատական առավելությունները քիմիական արդյունաբերության և մեքենաշինության որոշ ճյուղերում, մասնավորապես՝ մետալուրգիայի, տեխնիկական ապրանքների արտադրության և ճշգրիտ մեքենաշինության ոլորտներում: Սակայն, 21-րդ դարի սկզբին ԵՄ երկրների բաժինն այնպիսի ոլորտներում, ինչպիսին են էլեկտրական ապրանքների և կենցաղային տեխնիկայի արտադրությունը, կրճատվել է: Ի տարբերություն լայն սպառման առարկաների արտադրության և մասնագիտացված մատակարարների կայուն դիրքերի, ԵՄ ավանդական ու գիտատար ճյուղերն ունեն ապամասնագիտացման միտում:

Նշված ոլորտներում ԵՄ երկրների մասնաբաժինը կրճատվել է ինչպես տեղական, այնպես էլ համաշխարհային շուկայում[1] (աղյուսակ 2): Ավանդական ոլորտներում (տեքստիլ արտադրանք, հագուստ, կոշիկ, կաշվե իրեր, կահույք և այլն) ԵՄ երկրների մասնաբաժնի կրճատումը հիմնականում պայմանավորված է այդ շուկաներում Հարավարևելյան Ասիայի երկրներից նոր «խաղացողների» մուտքով: Իսկ գիտատար ճյուղերում դիրքերի թուլացումը սկիզբ էր առել դեռևս 1980-ական թթ.[2]:

Աղյուսակ 2-ում բերված տվյալները վկայում են, որ ԵՄ երկրների մեծ մասում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական ծախսերը չեն գերազանցում ՀՆԱ 3%-ը: Մեծ չէ նաև գրանցված պատենտների թիվը, որը հատկապես Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում հասնում է ընդամենը մի քանի տասնյակի: Բարձրտեխնոլոգիական ապրանքների արտահանման տեսակարար կշռով առաջատարը Չեխիան է, որտեղ նշված ցուցանիշը 16,3% է: Չեխիային հետևում են Ֆրանսիան ու Հունգարիան, համապատասխանաբար՝ 13,9% ու 13,2% ցուցանիշներով: Բարձրտեխնոլոգիական արտահանման տեսակարար կշիռը ցածր է Լյուքսեմբուրգում, Կիպրոսում, Հունաստանում, որտեղ այն չի հասնում նույնիսկ 2%-ի: Այնուամենայնիվ, ԵՄ երկրները ինովացիոն զարգացման վարկանշով աշխարհի 128 երկրների շարքում գրավում են բավական տպավորիչ դիրքեր: Մասնավորապես՝ դրանցից 7-ը նշված ցուցանիշով դասվում է աշխարհի 10 առաջատարների շարքը:

ԵՄ սննդարդյունաբերությունը, միասնական գյուղատնտեսական քաղաքականության իրականացման շնորհիվ, ակտիվ հովանավորչության բացառիկ օրինակ է, որը նպաստում է ԵՄ առևտրային հաշվեկշռում սննդարդյունաբերության դրական ներդրմանը: ԵՄ սննդարդյունաբերության մրցակցային դիրքերն ավանդականորեն աչքի էին ընկնում կայունությամբ, որը նպաստել է շուկայում եվրոպական արտադրողների մասնաբաժնի ավելացմանը:

---

[1] Lall S., The creation of comparative advantage: country experiences / S. Lall. - New York, 2015, 254 p.

[2] Miiana C. Changes and trends in the world trade in high technology products / *C.* Milana // Cambridge Journal of Economics. 1998., № 19, p. 225-243.

Աղյուսակ 2

ԵՄ երկրների տեխնոլոգիական զարգացման հիմնական ցուցանիշները 2016 թ.[1]

Երկիրը	Բարձրտեխնոլոգիական արտահանման տեսակարար կշիռը համախառն արտահանման մեջ (%)	ԳՀՓԿ ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ մեջ (%)	Պատենտների քանակը	Նորարարական զարգացման վարկանիշը (տեղը 128 երկրների շարքում)
Գերմանիա	13,0	2,84	66893	10
Ֆրանսիա	13,9	2,26	16300	18
Իտալիա	5,5	1,29	9687	29
Բելգիա	10,0	2,46	1097	23
Նիդեռլանդներ	13,1	1,97	2494	9
Լյուքսեմբուրգ	0,6	1,26	247	12
Մեծ Բրիտանիա	8,9	1,70	22801	3
Հունաստան	1,9	0,83	573	40
Պորտուգալիա	2,5	1,29	945	30
Իսպանիա	3,8	1,22	3020	28
Դանիա	6,1	3,08	1732	8
Շվեդիա	8,8	3,16	2428	2
Ֆինլանդիա	5,4	3,17	1416	5
Ավստրիա	9,5	3,0	2441	20
Իռլանդիա	9,1	1,52	440	7
Սլովակիա	9,2	0,89	256	37
Սլովենիա	4,5	2,39	462	32
Լատվիա	7,0	0,69	137	34
Լիտվա	5,3	1,01	119	36
Էստոնիա	12,5	1,43	36	24
Հունգարիա	13,2	1,37	633	33
Լեհաստան	6,6	0,94	4815	39
Չեխիա	16,3	2	952	27
Կիպրոս	0,5	0,49	7	31
Մալթա	5,7	0,85	11	26
Ռումինիա	-	0,38	1053	48
Բուլղարիա	3,02	0,78	291	38
Խորվաթիա	3,5	0,79	186	47

Այսպիսով՝ արված վերլուծությունները փաստում են, որ ԵՄ անդամ երկրների մասնագիտացման մակարդակի որոշման և մրցակցային առավելությունների բացահայտման նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել առանձին երկրների ճյուղային մասնագիտացման տարբերությունները: ԵՄ յուրաքանչյուր անդամ երկիր բնութագրվում է տնտեսական ու տեխնոլոգիական զարգացման յուրահատուկ միտումներով, ընդ որում, երկարաժամկե-

[1] The Global Innovation Index 2016: Winning with Global Innovation // Cornell University, INSEAD, and WIPO (2016): Ithaca, Fontainebleau, and Geneva 2017, p. 20-22, 336-420., World Intellectual Property Indicators 2016 // Economics & Statistics Series 1, WIPO, Geneva 2017, p. 7-12.

տում ակնհայտ է դառնում առանձին երկրի զարգացման միտումի հարաբերական կայունությունը: Միաժամանակ, ԵՄ շրջանակներում պահպանվում են էական տարբերությունները հարավի և հյուսիսի միջև: Ավելի զարգացած հյուսիսային երկրների տնտեսությունները հիմնված են բարդ տեխնոլոգիական ոլորտների մասնագիտացման վրա, այն դեպքում, երբ հարավային երկրների համար աշխատատար ավանդական ոլորտները շարունակում են մնալ մրցակցային առավելությունների հիմքը:

ВРАМ КАРАПЕТЯН

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ РЕГИОНАЛЬНОГО РАЗДЕЛЕНИЯ ТРУДА

Ключевые слова: *международное разделение труда, регион, особенности, специализация, Азиатско-Тихоокеанский регион, Европейский союз*

Изменения в производственных системах, которые входят в сферу отдельных отраслей, создают предпосылки для фундаментального пересмотора отношений на региональном уровне. Для этого необходимо выявить особенности регионального разделения труда в рамках различных групп региональной интеграции.

VRAM KARAPETYAN

INTERNATIONAL EXPERIENCE OF REGIONAL DIVISION OF LABOR

Key words: *international division of labor, region, features, specialization, Asia-Pacific region, European Union*

Changes in production systems that fall within the scope of individual industries create the prerequisites for a fundamental outlook for relations at the regional level. To do this, it is necessary to identify the features of the regional division of labor within the various groups of regional integration.

ՎԵՐԳԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԻՍՐԱՅԵԼԻ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հիմնաբառեր. *նորարարություն, ազգային նորարարական համակարգ, գիտություն, վենչուրային հիմնադրամ, ստարտ-ափ, նորարարական մշակույթ, համաշխարհային տնտեսություն*

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Իսրայելի ազգային նորարարական համակարգի ձևավորման և զարգացման հիմնական միտումները և կիրառել դրանք ՀՀ տնտեսությունում: Իսրայելը բավական արագ տեմպերով դարձել է նորարարական հսկա տարածաշրջանում և համաշխարհային տնտեսությունում: Իսրայելի նորարարական ֆիրմաների հաջողության մոդելը օրինակ է այն երկրների համար, որոնք փորձում են իրենց տնտեսությունը տանել այդ ճանապարհով: